# ՁԵՎԱՎՈՐՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ ՄՇԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

11.02.2019 14:12

***Հարգելի փաստաբաններ,***

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **08.02.2019թ. թիվ 33-Ա որոշմամբ** ձևավորվել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների նախագիծ մշակող աշխատանքային խումբ, որը երեք ամսվա ընթացքում մշակելու է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների նախագիծ և ներկայացնելու է փաստաբաններին՝ դիտողությունների, առաջարկությունների և կարծիքների համար:

Եթե ունեք Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և/կամ լրացումների առաջարկներ, ապա խնդրում ենք դրանք ուղարկել նշված աշխատանքային խմբի համակարգող, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ, փաստաբան **Էմիլ Ամիրխանյանին՝ deputychairman@advocates.am** էլեկտրոնային փոստի հասցեով:

**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 08.02.2019թ. թիվ 33-Ա որոշումը**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })